

**ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԼԵՋՈՒՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՎ ՓՈԽՀԱՐԱՄ—
ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱՄ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

Սեպտեմբերի 13—15-ը նրանում տեղի ունեցավ գիտական կոնֆերանս, որը կազմակերպել էին Հայաստանի ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի, Ադրբեջանի ԳԱ Նասիմիի անվան լեզվաբանության և Վրաստանի ԳԱ լեզվաբանության ինստիտուտները: Կոնֆերանսի աշխատանքներին մասնակցում էին նաև Միության այլ քաղաքներից ժամանած լեզվաբաններ:

Կոնֆերանսը բաց արեց ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի դիրեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. Զաքախյանը: Նա նշեց ինֆորմացիայի և փորձի փոխանակման կարևորությունը գիտատեխնիկական տերմինաբանության զարգացման, գրական լեզուների նորմավորման և գործնական այլ խնդիրների լուծման համար: Տեսական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մեջ Գ. Զաքախյանը առանձնացրեց ընդհանրացնող և տարբերակող տիպաբանական գծերի, փոխազդեցության և փոխներթափանցման, այսպես կոչված՝ հեռավոր և մերձակա ազդակություն, Անդրկովկասի և, մասնավորապես, գրական լեզուների զարգացման ընդհանուր միտումների ու օրինաչափությունների ուսումնասիրության հարցերը: Անդրադառնալով կոնֆերանսում առաջ քաշված խնդիրների տեսական և գործնական նշանակությանը, Գ. Զաքախյանը ընդգծեց, որ կոնֆերանսում քննվում են համեմատաբար փոքր տարածքում գործառնող և լեզվաբանական ամենատարբեր ընտանիքների պատկանող հնդեվրոպական, իրերո-կովկասյան և թյուրքական լեզուների փոխհարաբերության ու զարգացման հարցերը:

Պեննար Նիստում առաջինը հանդես եկավ Վ. Ի. Արալը (Մոսկվա): Նրա զեկուցումը նվիրված էր հայերեն և օսերեն լեզուների տիպաբանությանը: Զեկուցողը գտնում էր, որ նշված լեզուներում առկա համապատասխանությունների ձևավորման ժամանակ իր հետքն է թողել կովկասյան ենթաշերտը:

Մ. Շ. Գասիմովի (Բաքու) զեկուցումը նվիրված էր սովետական շրջանում ադրբեջաներենի տերմինաբանության զարգացման հիմնական փուլերի բացահայտմանը: Տերմինաբանական աշխատանքների ժամալման և մինչ այդ եղած

թերությունների վերացման գործում, ընդգծեց զեկուցողը, մեծ նշանակություն է ունեցել 1952 թ. Ադրբեջանի գիտությունների ակադեմիային կից ստեղծված տերմինաբանական կոմիտեն: Վերջին ժամանակներում, նշեց Ս. Գասիմովը, գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական և քաղաքական տերմինաբանությունը ձևավորվել ու հաստատվել է, նկատելի հաջողություններ կան նաև տերմինաբանության միասնականացման ու համակարգման բնագավառում:

Վերացրեն տեխնիկական տերմինաբանության պատմության և նրա հետագա զարգացման ուղիների մասին՝ թեմայով զեկուցեց Ռ. Բ. Գամբաշիձեն (Թբիլիսի): Գիտատեխնիկական առաջընթացի ներկա փուլում տերմինաբանական հարցերի ճշգրտումը ժամանակակից գիտության և տեխնիկայի ամենահրատապ խնդիրներից մեկն է: Նա նշեց, որ վրացերեն տեխնիկական, ինչպես և այլ ճյուղային տերմինաբանների մշակման հիմնական աղբյուրը մայրենի խոսակցական լեզուն է իր հարուստ ավանդներով: Նոր տերմինների ստեղծման գործում քիչ դեր չեն խաղում բարբառները, ինչպես նաև հին վրացերենից եկող որոշ լեզվական կաղապարներ: Փոխառությունների դեպքում հաշվի են առնվում վրացերենում արդեն ավանդական, դարձած որոշակի չափանիշներ:

Այնուհետև կոնֆերանսի աշխատանքները շարունակվեցին երկու տարբեր սեկցիաներում: Առաջին սեկցիայում, որտեղ քննվում էին Անդրկովկասի լեզուների զարգացման և փոխհարաբերությունների հարցերը, լսվեցին 14 զեկուցում: Այստեղ կարդացված մի շարք զեկուցումների հիմքում դրված էր հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն լեզուների համեմատական ուսումնասիրությունների պատմական հայեցակետը: Այսպես, գրաբարի և հին վրացերենի շարահյուսական կառույցների ուսումնասիրության շնորհիվ Ա. Գ. Մարտիրոսովը (Թբիլիսի) գտնում էր, որ երկու լեզուների հնագույն վիճակներում ժամանակի պարագա ստորագրական նախադասությունները բնութագրվում են ձևաքերականական կապերի գրեթե նույնանման միջոցներով: Նա որոշակի նմանություն էր տեսնում նաև հայերենում և վրա-

ցերենում Լաւն (յան) և ալ, իկ ածանցների բառակազմական հնարավորութիւնների և գործառնութիւն միջե:

Լ. Լ. Քալարաւաձե (Թրիխսի) նույն լեզուներում բայական վերլուծական ձևերի առկայութիւնն փաստելը «Վրացերեն լեզվում բայի վերլուծական ձևերի օգտագործման պատմութիւնը» գեղեցիկ մեջ շէր կապում փոխազդեցության հետ, այլ համարում էր երկու լեզուներում էլ ինքնուրույն ճանապարհով առաջացած երևույթ:

Հայերեն և աղբրեջներեն լեզուների փոխհարաբերութիւնը նվիրված իրենց ելույթում Ա. Ի. Բուդաղովան և Վ. Լ. Ղուկասյանը (Բաքու) դանում էին, որ հայերենում աղբրեջներեն (ինչպես նաև թուրքերեն) լեզվի տարրերի ներթափանցումը հատկապես ակտիվացել է վաղից, ընդ որում, հայերեն մի շարք բարբառներում առաջնալիզվային քմայնացած ա, օ, ու ձայնավորների գոյութիւնը կապվում է ինչպես լեզվի զարգացման ներքին գործոնի (Աճառյանի օրինք), այնպես էլ նշված լեզուների երկարատև ազդեցութիւն հետ:

Հայերեն բարբառներից աղբրեջներեն մի շարք բարբառներին և խոսվածքներին անցած բառական փոխառութիւնների և նրանցում կատարված հնչյունական փոփոխութիւնների մասին զեկուցմամբ հանդես եկավ Ա. Ե. Խաչատրյանը (Երևան):

Հայերեն, վրացերեն և աղբրեջներեն լեզուների բառարանագրական կապերին էր նվիրված Գ. Կ. Գասպարյանի (Երևան) զեկուցումը: Նա թվեց բանասիրութիւնը անհայտ մի շարք բառարաններ, որոնց հրատարակումը կարող է նպաստել հարևան ժողովուրդների լեզուների ուսումնասիրութիւնը:

Հայ-վրացական լեզվական ընդհանրութիւնները և փոխազդեցութիւնը (հատկապես բառական փոխառութիւնների հիման վրա) էր քննվում Հ. Օ. Կոստանյանի (Երևան) ելույթում: Հայերեն և վրացերեն լեզուների զարգացման ամենատարբեր ժամանակաշրջանների հաշվառմամբ՝ հայ-վրացերեն զուգաձևութիւնների թիվը, ըստ զեկուցողի, հասնում է շուրջ 1200-ի:

Վ. Ա. Քոսյանի (Երևան) զեկուցումը նվիրված էր հայերենում աղբրեջներեն և վրացերեն անձնանունների տառադարձման հարցերին: Համադրելով երեք լեզուների հնչյունական համակարգերը, նա գտնում էր, որ հայերենը մեծ ճշգրտութիւնով կարող է հաղորդել փոխառվող անձնանունների հնչյունական համարժեք ձևերը:

Հայերենում բառասկզբական բաղաձայնական կուտակումների և լեզուների փոխազդե-

ցութիւն հարցերը քննվում էին Ռ. Մ. Թախմախյանի (Երևան) զեկուցման մեջ:

Մի շարք զեկուցումներում բացահայտվում էին աղբրեջներեն և կովկասյան լեզուների փոխազդեցութիւնը հարցերը: Աղբրեջներենի ազդեցութիւնը խինգալերեն, ինչպես նաև բազախյան լեզուների վրա քննվում էին Ա. Ա. Մալախովի (Թրիխսի) և Ա. Լ. Մամիդովի (Կիրովաբադ) զեկուցումներում: Դադատանյան-թաթիւն լեզվական առնչակցութիւններին էր նվիրված Տ. Մ. Անվեդովի (Բաքու) ելույթը:

Հայերենի հայցական հոլովաձևի լեզուագիտւմը Լ. Կ. Սաեթիիձե (Թրիխսի) իր զեկուցման մեջ կապում էր ինչպես բառերի վերջավորութիւնների անկման, այնպես էլ քարթվելական ենթաշերտի ազդեցութիւն հետ:

Այս սեկցիայում հետաքրքրութիւն լսվեցին Վ. Մ. Գրիգորյանի (Երևան) «Բովանդակութիւն մոտ հուշարձաններում մի տիպարանական զուգահեռ անցկացնելու մասին», ինչպես նաև Ս. Ա. Մկրտչյանի (Երևան) համավրացական շուրջ արմատի ստուգաբանութիւն մասին զեկուցումները:

Տերմինաբանութիւն տեսութիւն հարցերը քննող սեկցիայում լսվեցին 12 զեկուցումներ, որոնցում բացահայտվում էին ոչ միայն ներկայումս տերմինների ստեղծման, միասնականացման գործնական նշանակութիւն ունեցող խնդիրները, այլև ցույց էր տրվում այն դրական, ինչ կարող է տալ Անդրկովկասի ժողովուրդների զիտմական տերմինաբանութիւն պատմութիւն փորձը: Եթե հայերենի գիտական տերմինաբանութիւն և այդ ուղղութիւնով մասնավորապես «Հունարան դպրոցի» կատարած դրական դերը վեր էր հանվում Ա. Ն. Մուրադյանի (Երևան) զեկուցման մեջ, ապա հունարենի ազդեցութիւնը հին վրացերենի գիտական տերմինաբանութիւն ստեղծման և զարգացման ուղիների վրա բացահայտվում էր Գ. Ն. Մելիքիձե (Թրիխսի) զեկուցման մեջ:

Սովետական Հայաստանում ապրող քրդերի գրական լեզվում հատկապես վերջին երկու տասնամյակում առաջացած նոր տերմինների և բաղադրյալ անվանումների կազմութիւնն էր նվիրված Մ. Ու. Խալաթյանի (Երևան) զեկուցումը:

Հայերենի գիտական տերմինաբանութիւն մշակման գործում մեծ է սովետական շրջանում հրատարակված տերմինաբանական և մասնագիտական բառարանների նշանակութիւնը, առաջ Ա. Մ. Սաեթիանյանը (Երևան): Նրա զեկուցման մեջ նշվեց, որ այդ բառարանները, մինչև սովետական շրջանի տերմինաբանական հարուստ ժառանգութիւնն օգտագործելուց բացի, համարվել են ինչպես հայոց լեզվի բառա-

կազմական միջոցներով կազմված, այնպես էլ այլ լեզուներից և հատկապես ռուսերենից փոխառված տերմիններով:

Ռուսերեն գրականագիտական տերմինների փոխարեն հայոց լեզվում կիրառվող տերմինների համարժեքության հարցերն էին քննվում Լ. Բ. Պետրոսյանի (Երևան) զեկուցման մեջ:

Լ. Օ. Ղազանշյանը (Երևան) որոշակի դասակարգմամբ ներկայացրեց հայոց լեզվում գործառնվող լեզվաբանական տերմինների բազմաշերտ համակարգի որոշ առանձնահատկություններ:

Ժամանակակից գիտության ու տեխնիկայի բուռն զարգացումը և սրա հետ կապված բազմաթիվ նոր տերմինների ի հայտ գալը նոր խնդիրներ է դնում լեզվաբանության առջև: Եթե թարգմանական (երկլեզվյան) բառարաններում գիտատեխնիկական տերմինաբանության տեղի հարցերը քննվում էին Ա. Մ. Կոբախիձեի (Թբիլիսի) զեկուցման մեջ, ապա Ս. Վ. Մուսխելիձեի (Թբիլիսի) զեկուցեց վրացերենի գիտական տերմինաբանության համար բարբառների ճյուղային բառապաշարի նշանակության մասին:

Լեզվի բառակազմական առանձնահատկությունները որոշակիորեն դրսևորվում են նրա ճյուղային տերմինաբանությունում: Եթե հայերենի բառակազմական ձևաբանական-կառուցվածքային տիպերը Ս. Ա. Ասլանյանը (Երևան) իր զեկուցման մեջ քննում էր ռազմական տերմինների միջոցով, ապա հայերենի բառակազմական յուրահատկությունների բացահայտման համար Տ. Մ. Ավետիսյանը (Երևան) ընտրել էր անձնանունների որոշ խմբեր:

Հայոց լեզվի տերմինային համակարգում զուգահեռ ձևերի նախնական դասակարգման մասին խոսեց Ռ. Ն. Շալունցը (Երևան):

Զ. Պ. Կոմուլովայի և Ս. Ն. Կոյաչինսկայի (Լենինգրադ) զեկուցումը նվիրված էր ռուսերեն, անգլերեն (ամերիկյան տարբերակ) և գերմաներեն լեզուներում ապրանքների առևտրական անվանումներում միջազգային տարրերի բացահայտմանը:

Կոնֆերանսի վերջին պլենար նիստում «վրացերեն, հայերեն, ադրբեջաներեն լեզուների հետ ուղիերենի փոխհարաբերության պատմության շուրջ» զեկուցումով հանգես եկավ Վ. Լ. Ղուկասյանը: Ուղիերենը, որոնք Անդրկովկասի հնագույն ժողովուրդներից են, իրենց ողջ պատմության ընթացքում սերտ կապերի մեջ են եղել հարևան ժողովուրդների հետ: Վ. Ղուկասյանը գտնում էր, որ նշված բոլոր լեզուներում էլ կարելի է տեսնել ուղիերենի հնագույն հետքեր:

Վ. Թ. Զաեգիձեի (Թբիլիսի) զեկուցումը նվիրված էր լեզվական փոխհարաբերությունների զարգացման աստիճաններին և փոխներթափանցմանը: Նա լեզվական փոխհարաբերությունների զարգացման մեջ առանձնացնում էր չորս աստիճան. ընդ որում, փոխներթափանցումը դուրս հանելով փոխառությունների սահմաններից, բնորոշում էր որպես լեզվական փոխհարաբերությունների երրորդ և չորրորդ աստիճան:

Սեկցիայի նախագահներ Ի. Ի. Քավթարաձեի և Մ. Շ. Գասիմովի հաշվետվությունների շուրջը ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին Գ. Վ. Քափուրիան (Թբիլիսի), Պ. Մ. Մուրադյանը և Ս. Ա. Խաչատրյանը (Երևան): Սրանով Անդրկովկասի լեզվաբանների անդրանիկ կոնֆերանսը ավարտեց իր աշխատանքները:

ՌՈՐԵՐՏ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բաճախիբական գիտությունների թեկնածու: